

ՄԻՀՐԱՆ ԳԱՍՏԱԴԵԼԻ ԳԱՄԱՂԵՂԱՆ

ԷՇՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ*

(Ծեմարանի 100-ամյակի առիթով)

Էշմիածնը, սկսած նին դարերից մինչև Հայաստանի խորհրդապետումը, նելի է մեր մշակույթի և կրթության ամենանարուսան և առաջին օշախներից մեկը: Սկսած 3-րդ, 4-րդ դարերից պատուղ գործեն են դպրոցներ, իսկ 5-րդ դարի սկզբներում բացվել են հայագիր առաջին դպրոցներ, և այնուղեք սկիզբ տակ մեր գրականությունը:

Էշմիածնի թողած կրթական, ուսումնա-դաստիարակչական գործունեությունը մինչև այժմ հնագամանուրեն չի ուսումնասիրված և ըստ արժանիության գնահատված: «Էշմիածնը, որպես հնագոյն հոգևոր կրթության կենտրոն, արժանի է հասուլ ուսումնասիրության»¹: Իսկ Գևորգյան ճեմարանը այդ կրթական ժառանգության ամենաբարձր գագաթն է, որը պիտի է առավել մնի ուշադրության արժանանա:

Այս խաստով թեմական դպրոցները երշանիկ են, որ գոնեն նորելապահական տարեթվերի առիթով գտնել են իրենց պատմագրողներին:

* Գևորգյան ճեմարանի հիմնադրության 100-ամյակի առթիվ քաղվածքարար Բրատարակուս ենք ուրոշ հաստվածներ Մ. Գ. Գամալեյլյանի «Էշմիածնի Գևորգյան ճեմարան» դիսերտացիոն թեկնածուական աշխատությունից:

¹ Ա. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Երևան, 1958, էջ 261:

Նման փորձեր կրկու անգամ արվել և՛ն առև ճեմարանի մաստմամբ, սակայն չեն իրականացվել:

1899 թվին, երբ լրանում էր ճեմարանի հիմնադրման 25-ամյակը, մանեկավարժական խորհրդությունը ընդունեց գրել տալ նրա 25-ամյա պատմությունը: ՀՍՍՌ ՊԿՊ արխիվի ճեմարանի փոնզում պահպանվել է այս արձանագրությունը, որի մեջ տրված է նոյզեսկ շարադրելու մոտավոր ծրագիրը: Բայց թե ինչո՞ւ չի իրականացվել այդ մտադրությունը, առաջմ մեր անհայտ է մնում:

Սրբափի մի ձևանարկում նելի է ան 1914 թվին՝ ճեմարանի գործության 40-ամյակի համարելին: Այս անգամ կազմված ծրագիր չի եղել, սակայն առանձնացված է եղել հասուլ հանձնաժողով, որը պիտի գրել ճեմարանի պատմությունը:

1918 թվի նոյեմբերի 8-ի և 24-ի մանեկավարժական խորհրդի հիստերը նվիրվել են ճեմարանի 40-ամյա նորելապահ անցկացնելու և նրա պատմությունը գրելու հարցերին:

Ուսուցիչներից ոմանք պահանջել են գրել դպրոցի ներքին և արտաքին կյանքի մասին, ուրիշները խնդիր են դրել անդրադառնալ միայն ներքին կյանքի ամփոփմանը, իսկ Մանուկ Սրենյանը պահանջել է գրել ընդարձակ պատմություն, մասին ունենալով դպրոցի ներքին կյանքը, արտաքին հասարակական հարաբերությունները, նրա խաղացած դերը և այլն:

Այս միջոցառումը նոյնպես չի իրականացվել: Հոկտեմբերի 24-ի միստում որոշվել է մնտագել

փառատունը, Ալբատի ունենարով, որ 1914 թվին պիտի տունի երևանի թեմական դպրոցի 75-ամյա հոթելամբ:

Սույն աշխատանքը ձևանարկելով նպատակ է ենք ունեցել մեր համաստ ուժիքի սահմաններում, նախաստվետական շրջանի հայկական դպրոցների ընդհանուր տեսադաշտում, ուսումնասիրի և հրապարակ հանել Էջմիածնի Գևորգյան ճեմարամի համառոտ պատմությունը:

Ծևմարամի պատմությունը գրելու համար, հիմնականում օգտվել ենք արխիվային փառատիպությունից, դիմել ժամանակի մամուլին, հրատարակություններին և նախկին ուսանողներին ու դասախոսներին, որոնք մինչև այսօր են աշխատում են:

բնական արիթմին, Մատևոսադարանին և Գրականության բանօպարանին, որը գտանք անսպառ կյուրիք:

Էջմիածնը այն վայրն է, որ Բիմնադրվել է մեր առաջին դպրոցը, որտեղ նայ ժողովորի զավակներին այրութեան են սպիրիցրել մեր առաջին ուսուցիչները:

Էջմիածնում էր, որ առաջին անգամ նայ մատաղ սերնի կրյուրյան ու դաստիարակությունը առական ու հունական լեզվից վերածնեց մայրենի լեզվի, գրության օտար տառերին փոխարինեց նայոց տառը, օտար դպրոցին՝ մայրենին, և օտար դպրոցական պիտումին՝ հայրենին, սնիվականը:

Եթե փոքր ընդմիջումները նկատի չառնենք, ապա



Կոմիտաս վարդապետը և Հակոբ Մանանյանը ս. Էջմիածնում (1902 թ.)

Հարկ է նշել, որ յեն ճեմարամի պատմությունը ժամանակակիցներն ու նեստագա սերնդի ներկայացնեցին չեն գրել, բայց Մատևոսադարանում պահպանվել և երկու տարի առաջ պետական կենտրոնական պատմական արխիվին է հանձնվել մի այնպիսի հարուստ ժառանգություն, որը կարող է գիտության շատ բնագավառներից աշխատողների հետազոտության առարկա հանդիսանալ:

Միայն արխիվում եղած ճեմարամի ֆոնդի (Փոնդ 312) հարատությունը պատկերացնելու համար պիտի յիմանալ, որ կա շորէ 75 թղթապահակ, ամեն մի թղթապահակն ունի 30-ից մինչև 200 վավերագիր, ամենափոքր վավերագիրը պարունակում է 50-ից 100, իսկ մեծերը՝ 300-ից 500 թերթ:

1959 թ., երբ ժողովակեցները ճեմարամի պատմությամբ զրադիւ, սկզբում զրադիւցներ տպագիր աղբյուրների ուսումնասիրությամբ: Նախաստվետական շրջանի ամսագրերը և այլ հրատարակությունները ու պարերականները («Արարատ», «Փորձ», «Մեղոն», «Նոր դար», «Դարոց», «Մշակ» և այլն) ուսումնասիրելոց հետո դիմեցինք պետական կնճտ-

կարող ենք ասել, որ այսուեղ կաթողիկոսարանին աղընթեր, պատմական տարրեր ժամանակաշրջանում, միշտ գործել են տարրական, միջին և բարձր տիպի նայ դպրոցներ:

Էջմիածնի դպրոցները դիտվել են որպես ամենակարևոր, մայր դպրոցներ:

Այդ պատճառով էլ «Էջմիածնի դպրոցը, որպես նայ դպրության առաջին օջախներից մեկը, մեծ աղեցություն է ունեցել նայոց որիշ շատ դպրոցների վրա»²:

Համանապի է, որ նրա աղեցությունն առաջին ներդին տարածվել է Արարատյան նահանգում գրունը դպրոցների վրա և սպա գնացել ծայրագավառները:


Նրա մեն սկսու հարաբերության մեջ են եղել Օհանավանքի, Սաղմոսավանքի և Եղվարդի դպրոցները:

Ս. Մեսրոպի հիմնադրած դպրոցն էր, որը ճո-

² Նոյն տեղ:

ղավորվեց, գնաց-հասավ Սյունիք, Տայք, Մոփր, Ռտիք, Փայտակարան, Վասպորական և այլոր:

Նա ամեց, զրացավ, ճշխացավ և մեզ տվեց միջ- Աստղարում մոշակ վայելած Սյունիք և Նարեկա դպրոցները, Սամահնի, Հարուստի, Գևաձորի, Օթա- նավանքի Բամալսարանները՝ իրենց միջիախաններով, ճարուարապետներով, մաթեմատիկոսներով, տիեզե- րագէտներով, պատմագիրներով, գրողներով, բա- նաստեղներով ու այլ բնագավառի գիտականնե- րով:



Լեռ

(Առաքել Բարախամյան)

Էջմիածնի դպրոցը ընդուանվելով ու նվազելով, մեծանալով ու փոքրանալով, բոլոր տեսակի հապա- ճակները կրկնվել և կամ համալրանքները վայելե- լով, եկալ-հասավ միջն 19-րդ դարը, ամենայն ի- րավամբ կրկնվել ժառանգական համազարկեր, ամե- նուրեք «կեցցե» հոչակել կարողիկոսին, «ուսա»-ներ բացականելու: Ծեմարանի հիմնադրումը ստացել է համազարին հշանակություն և դարձել տունախմբու- թյան առիթ: Իր հրավաճքն արտահայտելով դպրոցի հիմնադրության մասին, ախտանքով պիտի հիշա- տակե, որ Ղ. Աղայանի հման ժողովրդական ման- կավարժը հասարակական հիմնարկներով կառուցվե- լիք ապա լավագոյն ձեռնարկումը համարել է սուլ հոգևորականության ազգանվեր գործունեության արդյունքը:

Հենքն ունենալու էր 29 տարեր բաժանմունքներ՝ հիվանդանոց՝ 15 մենակով, խոհանոց՝ 8 մենակով, բաղնիք և վացքառով 8 մենակով, ու օճանակ այլ հարմարություններ: Դպրոցն ունենալու էր նաև առանձին ախտառոտուն:

Հշշալ ծեմարանը մնացել է բոլոր վրա:

Ծեմարան կառուցելու բախտը, ըստ երևոյթին, վիճակի էր մետագա սերնին և, իրոք, վաղոցվա փայտիաց երազանքն իրականացավ Գևորգ Դ կա- թողիկոսի օրոք:

1869 թ. մայիսի 28-ին Մայր տաճարից դեպի հյուսիս-արևելք, մոտավորապես 700 քայլ մետավո- րության վրա, դրվեց ծեմարանի առաջին հիմնա- քարը:

Ծեմարանի շենքի հիմնադրման արարողությանը մերկա է եղել Ղազարոս Աղայանը և իր տաճա- վորությունները գրել «Արարատ» ամսագրի 1869 թ. Բ համարում:

«Նախընթաց մայիսի 25-ին բախտավոր հանդի- սակատարությունից, որոնց մինն էր Նորին Վեհա- փառության օճման երկրորդ տարեշարձ և երկրորդ տեղվույս կառուցանելիք ուսումնարանի հիմնոր- նությունը»:

«Վեհափառ Հայրապետը ինքն իր ձեռոք առաջին քարը դրավ»:

Էջմիածնի ժառանգավորաց դպրոցի անգերեն լեզվի ուսուցիչ Պ. Կ. Ֆոյանցանը ճառ է արտաս- նելու: Հավաքված են եղել նոգենոր ու պետական աս- տիճանավայրներ, բազմահազար մարդիկ: Ցնծու- թյունն ու տոնախմբությունը կատարյալ դարձելու համար տրվել են բրացանային համազարկեր, ամե- նուրեք «կեցցե» հոչակել կարողիկոսին, «ուսա»-ներ բացականելու: Ծեմարանի հիմնադրումը ստացել է համազարին հշանակություն և դարձել տունախմբու- թյան առիթ: Իր հրավաճքն արտահայտելով դպրոցի հիմնադրության մասին, ախտանքով պիտի հիշա- տակե, որ Ղ. Աղայանի հման ժողովրդական ման- կավարժը հասարակական հիմնարկներով կառուցվե- լիք ապա լավագոյն ձեռնարկումը համարել է սուլ հոգևորականության ազգանվեր գործունեության արդյունքը:

«Վասնեցի ժողովրդի նոգեն կյանքը հոգևորական- երի ձեռքին է, նորա են նորա պաշտպանողը և մատնողը Աստծոն և քագավորի առջև, նոցա մեռ կապողը և արձակողը»:

1869 թ. մեստեմբերի 28-ին սկսվում է ծեմարանի շենքի կառուցումը Գևորգ Դ կարողիկոսուն Կ. Պոլսից հրավիրեց ճարտարապետ Հարություն Արգարյանին: Ծենքի պատերը նոր էին սկսել բարձրանալ, երբ սպանվում է Արգարյանը: Հրավիրվում է մեկ որիշ ճարտարապետ, որը դեպի Էջմիածնի ճանապարհին մտնում է:

Վեհափառ ստիպված հրավիրում են Կ. Պոլսի հշանավոր Պայտա ճարտարապետների ընտանիքից սերված Սարգիս Պայտանին:

Ճարտարապետ Սարգիս Պայտանը փոխում է ծած- կի ձևը և մոցնում ճանակի բարեփոխություններ: Թափով առաջ է գնում շինարարական աշխատա-

ըր,և 1874 թ. ուսումնական տարիւա սկզբին չենքը արդին պատրաստ եր:

1874 թ. ապրիլի 20-ին Գնորգ Դ կաթողիկոսը Շնմարանի բացմանը նախապատրաստվելու նպատակը հասուն կ կրնդակով մարդիկ է գործողություններն ու վիճակները՝ աշակերտներ արձանագրելու համար:

Վահան վարդապետ Բատտամյանին ողարկում են Սատրափիան, Բնարարիա, Նոր Նախիջևան, Մոսկվա և Պատրիքորդ:

Գնորգ վարդապետ Սուրենամյան Հանձնարարություն են Բնարարիայի մի մասը, իսկ Արիստակես Կայսերական Սերպականին Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի և Շամախու թեմերը:

Նոյն ճպատակի համար Արևմտյան Հայաստանի և Պարսկաստանի թեմերին ու վիճակներին և մասնավագ Կ. Պոլսի պատրիարքարանին առաքում են գործոցուները:

Նախատեսված են ճնմարանում առաջին տարությունները՝ 75 հոգի, որից 48 հոգի Արևմտյան Հայաստանից և Ռուսաստանից, 21 հոգի՝ Արևմտյան Հայաստանից, 5 հոգի՝ Պարսկաստանից:

Գործուղված անձանց հանձնարարված էր որոնել, գտնել լավագույն աշակերտներ: Պատվիրակներին հանձնարարված էր նաև կատարել նյութական հանգանակությունների մասնակի պահպանության համար. «Բարձրագույն կրթություն ունենալու համար բավական չէր միայն նյութական մասին հոգալ, քանի որ պատրաստի աշակերտներ հավաքելը նոյնպես մեծ չանր էր պահանջում»³:

Այսպիսի դժվար պարբաններում պիտի բացվեր ճնմարանը: Գնորգ Դ կաթողիկոսին մնում էր իր նորարաց դպրոցի համար Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում աշխատող ուսուցիչներից ընօրություն կատարել և օգտագործել միարանության մեջ գտնվող կարող ոժերին: Կաթողիկոսն արբես էր վարդիկ:

Ուսացին տարիւա ուսուցիչներն եին՝ Սուրբիա վրդ. Պարզման (միաժամանակ ժամանակավոր վերատեսուչ), որն ավանդում էր հայոց լեզու, Հովհաննես վրդ. Երեմյանը՝ կրոն, Արիստակես վրդ. Սերբականը՝ Հայաստանի պատմություն և աշխարհագրություն, Գնորգ վրդ. Սուրենյանը՝ Ռուսաստանի պատմություն և Ռուսաստանի աշխարհագրություն, Վահան վրդ. Բաստամյանը սկզբում դասավանդել է ուսաց լեզու, իսկ հետո՝ եկեղեցու իրավագիտություն, Պողոս Շերպենյանը հշանակվել է վերակացու:

Ճնմարանի ուսուցչական խմբի մեջ հաջորդ տարիներին նոր մարդիկ եին մուտք գործում, նրանց շարքերը համարվում էին նորավարտ կարող ուժերով:

1881—82 ու. տարություն արդեն հանդիպում ենք նույնական անուններին. Արշակ Նահապետյան, Կա-

րապետ Կոստանդնուպոլիս Արքարարյան, Հուսիկ վարդապետ Մովսիսյան, Ղևոնդ վրդ. Հովհակիմյան, Փիլիպոս Վարդանյան, Սերբակ Մանոհինան:

Ուսուցչական կազմի մեջ փոփոխությունները սուսա-ստեա էին տեղի ունենում: 1884—85 ու. տարություն, Շնմարանում դասավանդել են.

Գրիգոր եպս. Աղափիլիմյան՝ աստվածաբնություն, կրոն և եկեղեցու պատմություն:

Կյուրեկ վրդ. Մրացյան՝ կարգ աստվածաբնություն, եկեղեցական տոմարգիտություն և ուսաց լեզու:

Ղևոնդ վրդ. Հովհակիմյան՝ ճայնագրություն:

Սերբակ վրդ. Մանոհինան՝ տրամարանություն, բարյական փիլիսոփայություն և մանկավարժություն:

Ստեփանոս Պալաւանյան՝ հայոց պատմություն, Քրիստոնեան:

Փիլիպոս Վարդանյան՝ ընդհանուր և ուսաց գրականություն, պատմություն և գերմաներեն:

Կարապիս Կոստանդնուպոլիս, հայոց մատենագրություն, տեսություն մատենագրության, ննախություն Հայաստանի, եկեղեցական մատենագիտություն, Հայաստանի աշխարհագրություն:

Սերբակ Արարատյան՝ մաթեմատիկա և տիեզերագիտություն:

Գրիգոր Տեր-Գրիգորյան՝ բնագիտություն, բնական պատմություն-բնախուսություն, առողջապահություն և բժշկական գիտություն:

Մարտիրոս Քերեստենյան՝ գեղագրություն:

Առաքել Սագինյան՝ զնագրություն և նկարչություն:

Ռուբեն Ռուբենյան՝ տաճկերեն (տաճկանապատկերի համար):

Ուսումնավան Վահան վարդապետ Բատտամյանի 1878 թ. սեպտեմբերի 80-ի գրավոր զեկուցագրից երևում է, որ աշակերտների թիվը հասել էր 105 հոգի, որից 1-ին դասարանում 15, 2-րդում՝ 28, 3-րդում՝ 25, 4-րդում՝ 25, և 5-րդում՝ 17 հոգի:

1879 թ. աշակերտների թիվը հասավ 185 հոգու: 1881—82 ու. տարություն արդեն գործում էին Ա. և Բ լարամները, աշակերտների թիվը (ուսանողների հետ) կազմում էր 179, որից 21-ը՝ ուսանող: 82—83 թթ. գիշերօթիկ սաների հետ սովորել են նաև երեսեկ աշակերտներ (վերջինները նախկին ժառանգավորաց դպրոցի աշակերտներն եին): Աշակերտների և տաճողների ընթանուր թիվը կազմել է 336, որից 219-ը՝ գիշերօթիկ, և 117-ը՝ երթներ:

1890-ական և 1900-ական թվականներից հետո ճնմարանում աշակերտության և ուսանողության քանակական աճը կախված էր համարակական պայմաններից և ճնմարանի նյութական մարավորություններից:

1908 թ., 1909 թ. և հետագա տարիների ընթացքում աշակերտների թիվը բարձրացել ու տասնական վել է 300, 350—370-ի միջև: 1915—1916—17 ու. տարիներում կյուրական վատ պայմանների հետևանքով սովորողների քանակը նորից նվազել է, իսկ նրա գոյության վերջին ու. տարություն իշել մինչև 150-ի:

³ ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մատենադարան, ձեռ. 6717, վ. Բատտամյան տարեգիր, էջ 212:

Գնորդան ճեմարանի հյուրական լավ և վատ վիճակը կապված էր նայ ազգի հյուրական դրության, ժողովոյի նոգաւոր վերաբերմունքի և ճեմարանի ի նպաստ կատարված նվիրատվությունների մեջ:

Ճեմարանի շենքի կառուցումից սկսած մինչև աշակերտության սկզբու, հաջողեղու, դասախոսական կազմին վարձատրելու բոլոր ծախսերը գործել են ժողովոյի կողմից տրված հաճախակայություններից, կտակներից:

1867 թ. Գևորգ Դ կաթողիկոսն իր ապահովեն անցնելուց մի քանի ամիս մետք, ապագա ճեմարանը նի համար շենք կառուցելու նպատակով, դիմում է թեմերի առաջնորդներին՝ խնդրելով դրամական օգնություն:



Մամուկ Աբովյան

«Ճեմարանի շինությունն սկսելուց առաջ ամենայն պայծառ հայ մարդ յոր հյուրական հնարակորդությունը կրներ»⁴, գրել է Մեսրոպ Եպս. Սմբատյանը:

Սուրայլոր հաշվումներով միայն 1870—78 թվականներին բոլոր թեմերը հայ ժողովոյից հավաքել և ճեմարանի կառուցման ու թիմանդրման համար ուղարկել են մոտավորակն 224, 500 ռ.: Նթե սրան ավելացնեմք էշմիածնապատկան գյուղերի հարկերը, բոլոր թեմերից ստացված այլ կարգի նվերները (ուղյա և արծաթյա զարդեր, պահարմեր, իրեր) և

⁴ ՀԱՅՈՒ ՊԿՊԱ Գոնդ. 57, գործ 259, էջ 8:

սևնամթերքի բոլոր տեսակները (ցորեն, զարի, մրգեր), հասկանալի կինսի, որ ճեմարանի կառուցման և պահպանությունը համաժողովրդական գործ է և այն իրավամբ պատկանությունը է նայ ժողովոյին:

1874 թ. հոկտեմբերի 18-ին, ճեմարանի շենքի հրդեհումից հետո, ամեն կողմից ցոյց տրվեց սրագի օգնություն:

Հրդեհման լուր «Արարատ» ամսագրի 1874 թ. նոյեմբերի համարում կարդացող յորաքանչյոր նայ գաղտղ է իր հյուրական օգնությամբ արագացնել շենքի վերանորոգումը:

1875 թ. Մայր Արքունի կողմից շնորհակապքեր են ուղարկված հազարավոր հայերի՝ հրաց ցոյց տված օգնության համար: Հետաքրքրական այս է, որ ունեութերի կողքին եղիլ են նաև շունչութեր, որոնք նույնպես ցանկացել են իրենց շնչին հնարակորդություններից բաժին համեմ: Միայն արմավիրաբեակ 115 նայ քաղաքացիներից յորաքանչյոր տվել է 2 ռ., կամ 1,50 ոորդի, նոյնիսկ եղիլ են անձինք, որ ուղարկել են մեկ ոորդի կամ 50 կուպեկ:

Նման ձևով կոպենեներ, ոորդիներ և մեծ գումարներ են նվիրել գրեթե բոլոր վայրերի հայերը, որուցից համեմատարար ավելի շատ են օգնել բուն Հայաստանի բնակչութերը:

Հնդիանուր կարգի նվիրատվություններից բացի ի հայեն Երևանի, Ակերանորապոյի քենուրի սամանակարում գտնվող զուղացիները շենքի կառուցման ու վերանորոգման ժամանակ սայերով փոխադրել են ողջ շինանյութը, ըստ ոորդ, անտառակուր տեղափոխվել է 100 կիլոմետր հեռավորությունից:

Մինչև 1899 թ. սեպտեմբերի ամիսը, պահինքն անցած 25 տարիների ընթացքում, տեսուշներին տրվել է 28685 ռ. աշխատավարձ, ուսուցիչներին՝ 250478 ռ., վերակացուներին՝ 28685 ռ., բժշկին՝ 28887 ռ., և ծառաներին՝ 81498 ոորդի: Բոլորը միասին կազմուն է 402404 ոորդի:

Յորաքանչյոր սպառողի հագուստի և այլ կարգի կարիքների համար կատարված ծախսերը 25 ոորդուց այլ կողմ շենք անցնում: Արդեն հայտնի է, որ ճեմարանի սաների թիվը ամենաշատը չի գերազանցել 380—370-ից, կեշանակի այս պատակով տարեկան պետք է ծախսված լիներ 8000 ռ.: Եթե 402404 ոորդ բաժանենք 25 տարիների վրա, յորաքանչյոր տարվան կամանի 18016—8000: Ուրեմն ճեմարանի մեկ տարվա բոլոր տեսակի ծախսերը մոտավորապես կազմել են 24018 ռ., այն դեպքու, եթե միայն Ֆիգունյանի կուակից ստացվել է 10—12 հազար ոորդի:

Այս կարգի նվիրատվություններ և կոպեներ եղիլ են գրեթե ամեն տարի, իսկ որիշ մանր ու մեծ եկամտութեր ստացվել են այնքան, որ հնարավոր չե բորդի մասին խոսել:

Գնորդան ճեմարանին նյութապես օգնելու և պահպանելու գործում մասնակցություն են ունեցել նաև բարեգործական ընկերություններն ու մեծանուստներ՝ վաճառականները, նոգերականները, կալվածատերները և ուրիշները:

Վերջիններիս օգնությունը նիմնականում եղել է ճեմարանում սաներ պահելու, ճեմարանավարտ լավագոյն տպորդներին արտասահման (Կատարելագործվելու համար) գործողելու, գիտական գրականություն հրատարակելու, գրականություն ձևորելու և նման նպատակների համար:

Մեջի Հայկացանը առաջնաներից մեկն էր, որ դիմելով ճեմարանի վարչությանը խնդրել էր իր հաշվին մեկ ուսանող ուղարկել արտասահման առվորելու (1883 թ. մայիսի 28-ին մանկավարժական խորհուրդը որոշում է Երա հաշվին Սարգիս Տեր-Գարբիլյանին ուղարկել Գերմանիա տվորելու): Ավարտելուց հետո նման ուսանողներին պարտավորեցնում էին վերադառնալ և աշխատել ճեմարանում կամ որևէ հայկական այլ դպրոցում:

Ազգային բարերար Մանթաշյանի տրամադրած միջոցների հաշվին Գերմանիա են ուղարկել սպոնսորներու Մանուկ Արելյանին և ուրիշների:

Նման պայմաններով բարերարներ Տիգրանյանի, Ղուկասյանի և ուրիշների Փոնդերի հաշվին Գերմանիայում են սպոնսոր Գարեգին սարկավագ Հովսեփյանը, Կոմիտաս սարկավագ Տեր-Մկրտչյանը, Կոմիտաս վարդապետը, Սպիրիդոն Մելիքյանը, Գևորգ վորդ սարկավագ Զորեկչյանը, Երվանդ վարդապետ Տեր-Միհանյանը, Արշավիր Շավարշյանը, Գևորգ Լիլյանը և ուրիշներ:

1898 թ. Ռուսաստանի համալսարաններն են գործողվել երկու ուսանող, այնուհետև Բարսի բարեգործական ընկերության հաշվին Խարկովի, Կիևի, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում են սպոնսոր ճեմարանի այլ շրջանավարտներ:

Ճեմարանի բարերարների Փոնդի հաշվին Մայր Աթոռի տպարանից հրատարակվել են նաև գիտական որոշ գրականություն և դասագրքեր:

Ղուկասյան Գոնդի հաշվին 1907 թ. հրատարակել են Մանուկ Արելյանի «Գրաբարի քերականություն», Արամ Օթելյանի «Մանկավարժություն», Ղազարոս Աղայանի «Մայրենի լեզու», Մեղրակ Մանդինյանի «Ռուսաց լեզու» դասագրքերը: Տիգրանյանի Գոնդի հաշվին բանի անգամ հայտարարված է Եղել լավագույն աշխատությունների մրցանակաբաշխություն: Ադրբյանի մրցանակաբաշխություններից մեկի ժամանակ, 1899 թ., շահում է Հրաչյա Անադյանի «Արմատական բառարանը»:

1912 թ. ապրիլի 10-ին մանկավարժական խորհուրդը որոշում է Խամբարյանի Գոնդի հաշվին ատեղծել գիտական հրատարակություն և ամեն տարի հատկապես հայագիտական և գիտական լավագույն աշխատությունները ուսումնասիրել ու հրատարակել: Խոհ 1917 թ. Բունվարին, ճեմարանի փակման նախօրյակին, անգամ հայտարարում են լավագույն դասագրքերի մրցանակաբաշխություն: Խարեկէ այս ճեմանարկումը գլուխ չի գտիս, որովհետև մի քանի ամիս հետո ճեմարանը փակվում է:

Ճեմարանում աշխատող ուսուցչական կազմը կայունացավ այն ժամանակ, երբ ճեմարանը շրջանավարտներից լավագույններին հրավիրեցին նոյն տեղում աշխատելու:

Ծննդարանի լարամական բաժինն արդեն տալիս էր շրջանավարտներ, նրանց մեջ կային ընդունակ, բամբակ երիտասարդներ, որոնք խոսումնալից էին թե՛ գիտական պատրաստակամությամբ և թե՛ աշխատասիրությամբ: Ծննդարանի համար այն հարց չէր ուրիշ տեղերից անպատճառ ուսուցիչներ հրավիրելը:



Հրաչյա Անադյան

Եթե սկզբում նախկին շրջանավարտներից ճեմարանում հանդիպում ենք Կարապետ Վարդապետ Տեր-Մկրտչյանին, Սարգիս Տեր-Գարբիլյանին, Փանոս Վարդապետին, Լևոն Խոչոյանին, ապա 1894 թվից ավելանում են Սևե Հարությունյանը, Գևորգ վարդապետ Զորեկչյանը, Հովսեփ Վարդապետ Զորիաբյանը, Տիգրան Տեր-Հովհաննիսյանը, մի քիչ ուշ՝ Եղիշիկ արելյան, Ստեփան Կանյանը, Մանուկ Արելյանը, Գարեգին Վարդապետ Հովսեփյանը, Փարատան Տեր-Մովսիսյանը (Մեսրոպ Վարդապետ Մագիստրոսը) և ուրիշ շատերը:

Ուսուցչական կազմի կայունացմանը նպաստեց նաև այն, որ շատ գիտականներ ցանկություն հայտնեցին ճեմարանում աշխատել: Այս շրջանում ճեմարանը, որպես գիտական օջախ, արդեն ճանաշվում էր ոչ միայն Ռուսաստանում բնակվող հայ մտավորականության, այլև արտասահմանի թե՛ հայ և թե՛ օտար գիտականների կողմից: Կարելի է ասել, որ Գևորգյան ճեմարանը մեծ հոչակ էր վայելում գիտական աշխարհում:

Այժմ առանց շամքերի գործադրության, ցանկացած լավ նաև նախագիտմերին կարենի էր հրավիրել Եշմիածին: Չառ անգամ իրենք՝ գիտնականները, արձագանքում էին «Արարատ»-ում լուս տեսնող հայտարարություններին և դիմում ուղարկում ճեմարանում ուսուցչական աշխատանք ստանալու համար:

Հաւաքանայի է, որ ճեմարանում նոր ստեղծված պայմանների շնորհիվ հնարավորություն առնելով է գիտությունների զարգացման և ուսուցման համար: Այս շնչառում ճեմարանի համար բոլոր անհրաժեշտ գիտություններին արժանացած պատշաճ ուշադրույած:

Ճեմարանում հոգևոր առարկաների դասավանդման որակը լավագնելով համար Մայր Աթոռը և վարչությունը մասնագիտաց էին մի բանիմաց աստվածաբնության դասախոս ունենալու մասին:

Որպես արդարիստ հրավիրեցին Սամարքին եպիսկոպոս Օրմանյանին: 1887 թ. Օրմանյանը ճեմարանում արդեն դասախոս էր: Նա կրթուական առարկաները ամբողջացնելու համար լաբանաներում դասավանդում էր ասպլազմարանություն (թեալան, տեսական և բարյալան), թեմբառացություն, մեկնություն սուրբ Գրոց: Օրմանյան սրբազնը հանդես է բերում մանկավարժական միտություն, դրան միացնելով քարոզական վարպետությունը, գրավում ուսանողներին և դառնում նրանց սիրելին: Օրմանյանի ազդեցությունն այնքան մեծ էր ունանելով վրա, որ նրա աշակերտությունը շատերը հոգևորական դարձան և ճեմարանուն նվիրվեցին դասախություններ կարդացու աշխատանքներին: Օրինակ՝ Օրմանյանի նախկին աշակերտը՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը, գերմանական համալսարաններում կատարելագործվելուց հետո, երբ վերադարձել էր Վարդապետ ձեռնադրվելու, որպես կրոնի դասախոս, Օրմանյանի ազդեցությամբ Գևորգ Դ-ի գերեզմանի վրա արտասանում է երախտագիտական մի ճառ, որի մեջ ուսուում է հավատարիմ մնալ իր դասախոսի սկզբունքներիմ⁵:

Իրոք, սկզբում ուսանող, ապա դասախոս Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովհանիսյանը, Կոմիտաս վարդապետը և ուրիշները հավատարիմ մնացին հայ ժողովրդին, նրա պատմությանն ու մշակույթին:

Ճեմարանում 90-ական թվականին արտակարգ ծաղկում արդեն հայագիտությունն է: Մանկավարժությունն ու հայագիտությունը կազմեցին ճեմարանի երկու հիմնական ուղղությունները: Խոկ ասպլազմարանու-

⁵ Երվանդ Տեր-Մինասյան, Կարապետ եպս. Տեր-Մկրտչյան:

թյան ուսուցման որպես մեկ բարձրամաս էր, մեկ իշնում դասավանդող դասախությունների կարողություններին, պատրաստականությանը համապատասխան:

Շնմարանը հանձ էր իր լիակատար ծաղկմանը: Բոլոր առարկաներն ունենան անվանի մասնագետ և համար դասախություններ:

1899—1900 ու. տարում ճեմարանում ուսուցիչներ և դասախություններ էին այնպիսի մարդիկ, որոնք հիմնականում համաշված էին որպես մեր մշակույթի շահակիրներ: Ամեա Զրամք Կարապետ Վրոց, Տեր-Մկրտչյանը, Գարեգին Վրոց, Հովհանիսյանը, Սիրելիս Տիգրանյանը, Գլուխանիսյանը, Սկովանիսյանը, Գևորգ Ղազարյանը, Հակոբ Մանուկյանը:

Հրաշյա Անապանն աշխատում էր որպես գրադարանապետ: Այսպիսի մանկավարժական ուժերով նմարափոր էր ցանկացած համալսարանի ուսումնական պահանջները բավարարի:

1914—15 ու. տարում վերատեսուց է հրամիրված Ստեփան Մալիսապանը, իսկ որպես ուսուցիչներ՝ Տեր-Հակոբյանը, Ստեփանեանը, Աշոտ Հովհաննեսյանը, Կարոյանը, Հովհաննեսը, Հովհանիսյանը, Պատրոպանը, Կանայանը, Մակինցյանը, Մարգարյանը, Գանձեցյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Բահաթրյանը, Հազարապետյանը, Ղափանցյանը և մի քանի վերակացուներ:

Սուաշին համաշխարհային պատերազմի տարիներին ճեմարանում ստեղծվեցին հյութական ծանր պայմաններ: Դա ազդեց թե՛ ուսուցչական կազմի և թե՛ սովորողների վրա: Առաջ եկան խորը դժգոհություններ:

Գևորգյան ճեմարանը հիմնադրվեց որպես հոգևոր տիպի բարձրագույն դպրոց, և թեև նոյն անոնց շարումակեց մեզ մինչև վախճանը, սակայն նա միաժամանակ հանդիսացավ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի առաջին քառորդի հայ մշակույթի ու կրթական գործի կարևոր հաստատություններից մեջ:

1917 թվականի դեկտեմբերի 21-ին փակվում է Գևորգյան ճեմարանը:

Ճեմարանն այն միակ վայրն էր, որ ատեղծվեցին հիմքեր՝ նետագալում, Հայաստանի սովորականացումից հետո, դպրոցական ցանցն ընդարձակելու և բարձրագույն ուսումնական հաստատությունները հիմնադրելու համար:

